ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Շիրակի մարզի «Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 01.10.2019թ. թիվ 1 արձանագրությունից :

Օրակարգում 1. ՀՀ Շիրակի մարզի «Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:

Լսեցին- «Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:

(Զեկուցող՝ Հովհ. Մաթոսյան)

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը>> հաստատելու մասին ՀՀ Կառավարության 2010թ. մարտի 4-ի N319-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դրույթները՝ ՀՀ Շիրակի մարզի «Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը

Որոշում է

1. Հայտարարել մրցույթ ՀՀ Շիրակի մարզի «Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար:
2. Մրցույթն անցկացնել ՀՀ Շիրակի մարզի «Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում 2019 թվականի նոյեմբերի 26-ին,ժամը՝15:00-ին:
3. Մրցույթի մասնակիցների գործերն ընդունել ՀՀ Շիրակի մարզի <<Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ մրցույթի մասին հայտարարության 2-րդ հրապարակման օրվանից 30 օրվա ընթացքում՝ 19.10.2019թ.-17.11.2019թ. ժամանակահատվածում՝ ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ,կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:
4. Մրցույթ հայտարարելու մասին կառավարման խորհրդի որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետին:
5. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ տեղեկատվությունը տրամադրել կրթության ոլորտի պետական լիազոր մարմին:
6. ԶԼՄ–ներում մրցույթ հայտարարելու մասին առաջին հայտարարությունը հրապարակել 14.10.2019 թվականին,երկրորդը՝ 19.10.2019 թվականին:
7. Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների (գործերի) ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի նախագահ Հովհ. Մաթոսյանի վրա:

Դպրոցի կառավարման խորհրդի նախագահ՝ *Հովհ. Մաթոսյան*